



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5746
5747
5748
5749
5750
5751

U 50 50 50 50

U 40 40 40

U 20 20 20

891.990
U-50

U 10 10 10
1871

667

575 Money

1. Գրքագրություն և. Ա. Մ. Մանուկյան Կ. Պոլսում
1871
2. Ա. Մ. Մանուկյան: Երկրագրության և աստղագրության
Կ. Պոլսում 1871
3. Արևիկապարտություն և. Ա. Արևիկապարտություն
և աստղագրության պատմություն
Կ. Պոլսում 1863
4. Արևիկապարտություն և. Արևիկապարտություն
և աստղագրության պատմություն
Կ. Պոլսում 1912.
5. Արևիկապարտություն և. Արևիկապարտություն
և աստղագրության պատմություն
Կ. Պոլսում 1893.
6. Արևիկապարտություն և. Արևիկապարտություն
և աստղագրության պատմություն
Կ. Պոլսում 1910.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՔԵՐԹՈՒԱԾ

Ն. Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ ԹԻՒ 13

)(1863)(

1870

1870

1870

891.99

Ա. Կ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՔԵՐԹՈՒԱԾ

Ն. Ս. ՄԷԶՊՈՒԿԵՍՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ . Տ . ՄԱՏԹԷՆՈՍԻ Ս . ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


75-46-172

Ի ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ Ա. ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՆՈՒԱԳ Ա.

Դեռ չը ցամքած հայ բեկորներն թրջող ցօղ ,
 Հազիւ նոր դարն յաչաց բառնայր թախծի քօղ ,
 Նոր 'ի խուսափ կծկէր հին դողն հէք սրտէն ,
 Եւ հեծու թիւնք լռիկ մնջիկ նոյն ժամէն .
 Դեռ նոր պարզուած սիրոյ դրօշակ կարմրերփեան ,
 Դէմ զեփիւռին զուարթ պարուց մէջ 'ի ծածան ,
 Ուր եւ նորեկ դարնան ծաղկունք գեղեցիկ
 Ծիրանեգոյն փայլ սփռէին յայտ Հայիկ .
 Արդէն ամպոց ծըրար քակուած 'նդ այգն 'ի լոյս ,
 Եւ նորազուարճ սրտից վերայ ցօղէր յոյս :

Դեռ նոր թռչնոց երգն արձագանք տայր ձորոյն ,
 Այն ինչ թնդայր դաշտերու մէջ ալէլուն .
 Մինչ Աղբ , Օրէնք , Սատուած եւ Սէր քաղցր 'ի բոյր ,
 Ծխէին ինչ սրտերու մէջ . հոն համբոյր ,
 Հոն գիրկընդխառն եւ ցնծութիւն ծափահար ,
 Ուր եւ հրեշտակ Մասեաց սարէն զուարթանար :
 Եւ ինչ ձայներ , « այս ճանապարհ Հայուն ճիշդ » ,

«Օ՛ն սիրտք ի խինդ, փանք բուժեցաւ մեր հին վիշտ
Հայն էր Հայուն կրսէր, մոռցիր տխրութիւն,
Երգելով օրն, ուր փայլէր աստղն իր այգուն:

Եւ ահա՛ գոռաց յանկարծ որոտում,
Ծուխ մ'էր բարձրացաւ, բոց մ'ապա երկրէս
Տէր . . . ի՛նչ չար նշան, ուստի՞ այս գոչում

Լո՛ւռ . . . սեւ խէթն էր ճիշդ,
Զոր ձեռքն ամբարիշտ
Գողած առաւ քայլ՝
Զերթ կատաղի գայլ.
Եւ ո՛ւր . — հեզ գառին
Քաղցրախորժ զոհին:

Ի՛նչ ահարկու ձայն,
Սարսուաց սիրտ համայն .
Սոսկում, ցաւ ու դո՛ղ,
Դարձեալ տժգոյն քող .
Ո՛հ, խողոր պատկեր,
Չեռնարկէ յաւեր:

Մթնցաւ մեծ ճրագ,
Կայծակեց փայլակ .
Եւ ահա՛ յերկիր
Զոհն արեանք կարմիր .
Ուր հեծեց իսկ յոյս,
Հո՛ն էր տարակոյս:

Բայց ի՛նչ է այն . — թուր .
Հովուական ցուպն ո՛ւր . . .
Հարուածն այլ ահա՛
Խեղճ հօտին վրայ .
Ուր գութն 'ի վրդով,
Յոյժ գառն եւ գորով:

Տէս, որդին 'ի գո՞ւ
Դիմակալէ հօր .
Ես Ազգիս համար ,
Եւ իւրն իմ նշխար ,
Իւրն սէրս , սիրտս եւ ջանք .
Գոչէ , այն իմ կեանք :

Արդ տըխուր մանկիկ ,
Լուռ 'ւ երգն հայրենիք .
Ո՛հ , թողուց գուսան
Քնարն գովասան .
Եւ ահա՛ ողբոց
Լարք մնչեն 'ի կոծ :

Եւ ո՞ւր նոյն կայտառ
Պարմանւոյն կաճառ .
Ո՞ւր այն գողտր հնչիւն ,
«Սահմանադրութիւն ,
«Յոյս թշուառ Հայուն ,
«Սահմանադրութիւն :

«Ո՛վ դու բռնութեան
«Ոստիոդ եզակիան ,
«Սի՛թէ առաթո՞ւր
«Եղար . ի՛նչ չար լուր .
«Աստղիկ յուսածին ,
«Ծածկի՞ս լալագին :

Բուռ բուռ արցունք տէս հայ աչքէն ,
Հոսէ , ծըխէ նըզով սրտէն :
Գոգցես իր լոկ ճակատադիր՝
Պառակտիլն է ամէն իժիր :
Կարծես ծընած ողբոց համար ,
Հարուածոց տակ հեծել իսպառ .

Կ'ապրի որ խէթ 'ւ ատելութիւն
 Քամեն սրտէն դարուցն արիւն .
 Կ'ապրի եղբօր ձեռքէն միակ
 Ըմպել թունոյ լեղի բաժակ :

Դանն ես ո՛ր կեանք ,
 Բռնութեան տակ .
 Բացուէ՛ շիրիմ ,
 Որ դամ հանդշիմ ,
 Գոչէ ուժգին
 Հայն վշտագին .
 Ուր հեծէ յոյս ,
 Ձի տիրէր յոյզ :

Ո՛հ , գո՛ւթ . . . տէս , Տէ՛ր արդար . . .
 — Լո՛ւռ , լո՛ւռ հայ , սրահ մըն ալ . . .

ՆՈՒԱԳ Բ .

Բայց ի՞նչ է այդ . — խուճբ , մը տեսէք , ո՛վ օրեր .
 Ոտից փոշին բարձրանայ զերդ մուխն յեթեր .
 Մե՛ծ աղաղակ , մե՛ծ եւ թնդիւնն , ի՛նչ ձայն նոր ,
 Սքանչելի՛ք . ո՛վ Տէ՛ր , նշան զօրաւոր :

Քանդել՞ դիմէ ազգի մ'այն իսկ մնացորդներ ,
 Յոր ձեռն 'ի ծնօտ սրանդուխտ գոչէ , զթա՛ Տէ՛ր .
 Փրկել՞ կուգայ ժողովուրդ մ'ո՛չ յուսահատ ,
 Մի՛թէ լսե՞ց երկինք մեր դատն , ո՛ր ազատ :

«Սրբէ՛ արցունքդ , սիրտ , ո՛ն 'ի քայլ» , գոչէ . «քա՛ջ»

«Ձը լսեցիր՞ ժամանակին ձայնն , — յառա՛ջ .

«Վ հատութիւնդ 'ի բայց , ո՛ն փոյթ յասպարէս ,

«Գիտնայ աշխարհ , թէ դու ընտիր ազգ մըն ես :

«Ահա՛ կործան յանդնդախոր ժանտն 'ի խեռ ,

«Ուր եւ վրիժուց մեծ բոց մարած , ծխէ դեռ .

«Ահա՛ ընկնի սուրն ու բիրն այն ձեռքերէն ,

«Յորոց արիւն անձրեւեցաւ գետորէն :

«Չարին սլատրանք եւ իւր գաղտնի որոգայթ

«Կրնայ ըսել , գէթ քայլ մ'ան յիս գայթ 'ի գայթ .

«— Ո՛չ , ո՛չ . փշրի՛ թող գաւազանն անօրէն ,

«Որոյ հարուած հազիւ դարեր կը բուժեն :

«Փայլի՛ աստղիկն արդարութեան 'ի կամար ,

«Որ եւ սանձայ օրէնք , եւ ազգ մը թշուառ

«Ժպտի խաղաղ , ազատ շնչէ , միշտ 'ի յոյս ,

«Եւէք 'ի տես , ծագի փառօք հայոց լոյս :

Եւ ահա՛ խմբեակ ,

Յառաջ համարձակ ,

Մտնէ 'ի բանակ .

Ուր սիրտ բովանդակ

Չուարթ բերկրէր 'ի սէր :

Այլ ո՛ւր հեռ եւ խեռ :

Չայն մ'էր բարձրանար ,

Ծափն էր , որ թնդար .

Լո՛ւռ խրոխտ որոտում ,

Ամէն տեղ ցնծում .

Ո՛չ կոծ եւ արցունք ,

Փա՛նք երգեն շրթունք :

Ահա՛ ժողովուրդ

Դիմէ 'ի յագուրդ

Անձկութեան սիրոյն ,

Դէմքն այլ չէ տժգոյն .

Չեռքն եւ ո՛չ 'ի ծնօտ

Յարտասուաց արօտ :

Սուրբ ձայնն յերկինս վեր ,
Սչկունքն յարեւել ,
Խնդրէ այն պերճ ժամ
Ուր ծագի իւր կամ ,
Ո՛հ , ամէն վայրկեան ,
Մէկ տարւոյ փոխան :

Փութաց պատրաստել
Մուսայն իւր երգեր .
Թող կոյս սուգ 'ւ աւաղ ,
Զօրն կոչեց խաղաղ ,
Ուր շողշողայր ժպիտ
Յայտից մարգարիտ :

Այլ ո՛ւր թմրութիւն .
Աչք եւ սիրտք արթնն .
Ուր ամէն լեզու
Գոչէ լու 'ի լու ,
Ահա՛ յայս վեհ ժամ
Լուծուի մեր շղթայն :

ՆՈՒԱԳ Գ .

Ո՛վ է դա . — հրեշտակն ալեւոր Մասեաց ,
Տեսէք , այլ չողբար , ընթացքն է փառաց .
Զերթ գողտր արշալոյս ի՛նչ տեսք վառ 'ի վառ ,
Ահա՛ հայրենի սարերն իսկ պայծառ :

Եւ ո՞վ են դոքա . — պարք թռչնոց դարնան .
Եւ ի՛նչ են երգերն . — ծագիլի՛ բուրաստան .
Ուրեմն այլ հեռու ձմեռն սառնասէր ,
Եւ ցրտոյն ծոցէն փշող քամիներ :

Ո՛վ երջանկութեան բարեբաաստ օրեր ,
Ուր երգէ սոխակ , ուր ծաղկին ձորեր ,
Ուր սփռէ զեփիւռ բոյր վարդին քաղցրիկ ,
Ի դաշտ պարերգէ զեղեցիկ մանկիկ :

Տեսէ՛ք , Բիւզանդիոյ կամարին վըրայ
Հայ բաղդին չքնաղն արուսեակ պանծայ .
Ուր զուարթունն ուրախ տարածէ իւր աջ ,
Օ՛ն հապա , 'ի խի՛նդ . եւ ի՞նչ ձայն , յառա՛ջ :

«Հերիք կոծդ ու հեծ , յայց գայ քեզ երկին ,
«Փութա՛ գոհութեան տալ նուէրդ Արարչին .
«Սիրեցի՛ր զԱստուած , զօրէնս , զազգ եւ 'սէր ,
«Խնդիրդ 'ի կատար , զն յուխտ սուրբ առ Տէր :

Դադրեցաւ շիթ դառն , հոն յուզուած սրտեր ,
Օրհնեալ գոչեցին Աստուած եւ Ռւխտ մեր .
Ուր թաքչած լուսին եւ լոյսն իր աղօտ ,
Ծագումն արեւուն պճնէր հայ արօտ :

Բարեւեցին օրն պարեր հոյլ 'ի հոյլ ,
Թռչէր խումբին մէջ սիրասուն համբոյր ,
Ուր սիրտք արձագանք սիրոյ , հաշտութեան ,
Հոն ջրկար խոթոռ դէմք եւ ձայն հնութեան ,

Կայտուեց զուարթադէմ մանկտին կաթնասուն ,
Լսելով ձայն մը , — Սահմանադրութիւն .
Կրկրնեց 'ւ ինքն անդէն 'ի մնչիւն թոթով ,
Որուն լոյսն արդէն տեսած էր փառքով :

Սիրուն սլատանին , տեսած օրն խաղաղ ,
Յառաւօտ կանուխ ել 'ի ծաղկաքաղ .
Պըսակուած քնարիկ կուսին մատներով ,
Հնչեց ի՛նչ տաղեր քաղցրիկ դաշնակով :

Խումբ մ' հոս խումբ անդին
Քոչեն խնդագին ,
Կեցցէ՛ քոյդ բարեւ ,
Ո՛վ , որ վեհ արեւ
Կըլլաս մութ դաշտին ,
Յոյս յուսահատին :

Անունդ գեղեցիկ ,
Հնչմունքդ յոյժ քաղցրիկ
Զայնդ միշտ զօրաւոր ,
Տեսքդ ինչ փառաւոր ,
Օ՛վ Որէնքդ հայուն ,
Սահմանադրութիւն :

Հերիք այնչափ օր
Քողելդ դէմքդ աղուոր ,
Ծաղկէ՛ զերդ դաշտակ ,
Երգէ՛ զերթ սոխակ ,
Շնչէ՛ զերթ զեփիւռ ,
Զովանան հայք բիւր :

Քոյդ բաղդն հայկազեան ,
Ինչպէս Հայաստան ,
Որ 'քեզ աչքն յառած ,
Թեւերն 'ի տարած ,
Քեզ խնդրէ սիրուն
Սահմանադրութիւն :

Այլ եկար բարեւ ,
Կեանքդ ըլլայ անզրաւ .
Ըսէ՛ ամէնուն ,
Որ գործեն արթուն .
Քուկդ է միշտ հրաման ,
Ապրիս անասան :

Բայց ո՛ւր , ո՛վ Տէր , այն Զուարթուն ,
 Ո՛ւր այն արհին հայկազուն ,
 Որ Սրինաց սուրբ պահանջ
 Լսած գործէ աննահանջ .
 Ըլլայ թիկունք եւ պաշտպան ,
 Գթասէր Հայրիկ հայութեան ,
 Եւ իւր շաւղին առաջնորդ
 Արի Նոյ մը , զէկ մ' ուղղորդ :

Ո՛ւր անձնանուէր այն հովիւ ,
 Որուն հօտ մը բազմաթիւ
 Պատրաստ 'ի դաշտն ազգութեան
 Հայցէ իւր սուրբ գաւազան ,
 Եւ սէր , գորով հայրական
 Սիռել յորդիս Գրիգորեան ,
 Ժողովելով յայգն 'ի շուք .
 Ո՛վ օր . . . ո՛վ սիրտ բարեշուք . . .

ՆՈՒԱԳ Գ .

Զի՞ ձեռն 'ի ծնօտ . 'ի լա՞ց դարձեալ ,
 Ո՛չ . հայեացք մ' ըն , յերկնից կամար .
 Ահա՛ թռչնիկն աւետարեր ,
 Առ մե՞զ առ մե՞զ փափկիկ թռիչներ :

Արծաթագոյն եւ ցոլումներ
 Տեսէ՛ք 'ի սփիւռ Յոնիսայ եթեր .
 Հոն ցաթէ հոն , յուսոյ ճրագիկ ,
 Հոն 'ւ ուղղի տեսքն իր անուշիկ :

Այն տեղ , այո՛ , Մասեաց զուարթուն
 կուզէ լնուլ զանձուկ հայուն .
 Զայն մ' եւ ահա՛ , « հո՛ս հայ հովիւ ,

« Հոս Գրիգորի որդի մ'ազնիւ :

« Պատրաստ լսել Ազգին հրաւեր ,
« Ինչպէս երկնից պատգամն իսկ , — սէր
« Ձէտ Ներսէս եւ հարս քաջարթուն
« Արժան կոչուիլ ձեռ հայկազուն :

« Խաղաղութիւն . այս իսկ ձեր դար ,
« Ուր նախ Յրէնք արձակեն քայլ ,
« Ուր օրինացն արի պաշտպան
« Պատրաստէ պսակն իւր անթառամ :

« Օ՛ն . Բիւզանդիոյ Հայք յայս աշխարհ ,
« Ընդունել ձեր ալեւոր հայր ,
« Հայրենեաց դուք ըսէք այսօր ,
« Հէք հայաստան , մենք յայտէ հըզօր :

Եւ ահա՛ հայն 'ի Բիւզանդիոյ
Յայգուն առնու շաւիղն Յոնիոյ .
Ուր որդւոյն սիրտ տխուր 'ւ 'ի լաց
Ի բաժանում հօրն սրբակեաց :

Թող այլ երկիրդ այդ , հայր Պաւղոս
Թող ծովդ , անցիր Բիւզանդիոյ ծոց ,
Ուր դաւազան սուրբ եւ աթոռ
Յօրինաց քեզ շնորհի այսօր :

Հերիք հեծեց ազդ Գրիգորին ,
Մինչ առաջի դրանց օտարին .
Միշտ « Թշուա՛ռ եմ » ձայնն առ եղբայր
Եւ « Ո՛ւր ո՛վ Տէր , իմ մխիթար » :

Ո՛հ , կը լսե՞ս Յրինաց ձայն ,
Յայն ըսվտիւել ժողովուրդդ համայն .
Քրիստոսի հօտն եւ քու Ազգդ է ,

Որ սիրան 'ի յոյզ քեզ կը խնդրէ :
Լսէ՛, հայն սուրբ ձայնդ Պաւղոսեան ,
Եւ օրհնութիւնդ՝ ողջ Հայաստան .
Օ՛ն , հաշտութեան ոստն 'ի ձեռին
Ե՛լ յասպարէզ , ուր սիրտք յուզին :

Բերէ՛ք այն նաւն խաղաղ ալիք,
Ուր մանէ հայրն հայոց քաղցրիկ .
Ա՛ռ Բիւզանդիոն եւ զայն 'ի քեզ ,
Փոյ՛թ հապա հայր , 'ի մէզ 'ի մէզ :

Օ՛ն յափունս մանկիկ ,
Եւ դու, կոյս գողտրիկ ,
Ե՛լ երիտասարդ
Ի պար եւ յերգ զուարթ .
Զոյգ զոյգ ընդ առաջ
Հօրն , տեսնենք այն աջ ,
Որ գայ շնորհել շուք .
Ո՛վ տեսք բարեշուք :

Շարժի՛ կնտնտոց
Մուսային հայոց .
Յաթեց արշալոյս
Ի նաւն բարեյոյս .
Շողջողայ աստղիկ
Ի հայրն երջանիկ .
Ուր 'ի փայլ ալիք
Մերութեան փափկիկ :

Ահա՛ 'ի ծածան
Ալիք Բիւզանդեան .
Խաղայ թեթեւ թիակ
Ի փոքրիկ նաւակ .

Ուր պարզուած լուսնակ
Յօսմանեան դրօշակ .
Հոն ծով զերդ դաշտիկ
Ծաղկանց զեզեցիկ :

Ո՛վ արիւիդ փայլուն ,
Բաղդին Հայկազուն .
Ի քեզ հայրենեաց
Յոյսն եւ օրինաց ,
Յաշխոյժ անձնանուէր
Սրտից ազգասէր
Օր մը Մասեաց սար
Տեսնել յոյժ սլայծառ :

Նաւդ ալեծածան ,
Փառքդ Օսմանեան տան ,
Է՛ջ յեզերս ծովու
Ի թեւսդ օդաչու .
Թո՛ղ փոփոխամիտ
Ալիքն անժըմիտ .
Քեզ ափունք պատրաստ ,
Ծածկի՛ առագաստ :

Ա՛ռ նաւահանգիստ
Նաւդ այդ հայրանիստ ,
Բացուի՛ ծոցդ ազատ՝
Զէտ հարթ անապատ .
Այլ դադրի՛ փրփուր ,
Ծովն հանդ չի մաքուր ,
Երեւին ալիք
Սրբազնոյն քաղցրիկ :
Եւ ահա՛ . . . յառաջ .
Ո՛վ խաղաղողդ աջ ,

Որ գաս տածել խնամ
Ի հօտդ համերամ .
Եւ վշտաց սրտին
Տալ սէր կաթոգին ,
Մոռցնելով այն խեռ ,
Որ մրկեց սրտեր :

Մանկունք , խրախ , յառաջ
Փունջ ծաղկանց 'ի յաջ
Յանեցէք , ուր քայլ
Առնու մեր ' սուրբ հայր .
Ծափ զարկէք որդիք
Հայրենեաց քաղցրիկ .
Հիւսեցէք եւ սասակ ,
Զերն է յաղթանակ :

Լոյս , լոյս , գոչէ դար .
Ի բայ խաւար չար :
Օ'ն հասլա , հայ տղա .
Եւ դու փոյթ 'ի նա ,
Ուր կայ տեսարան
Ազգաց բազմերան ,
Ուր պարտք իրաւունք
Զոյգ զերթ հըսկայունք :

Թեւ առնու յերկին
Զեր ձայն խնդագին ,
— Կեցցէ հայութիւն ,
Եւ սլաշտպանն հայուն .
Ասլրի աննկուն
Սահմանադրութիւն .
Կեցցէ անսասան
Պօղոս Արբազան .

ՆՈՒԱԳ Ե .

Եւ ահա՛ ցոլայր ժպտում ծերունին ,
Ինչպէս արծաթեայ ամպոց տակ լուսին ,
Ինչպէս ցոլն այգուն 'ի սար եւ յառուակ ,
Այնպէս 'ւայն 'ի պար որդւոցն յողջունակ :

Կայտուեց երիւար յեզերս Բիւզանդեան ,
Յոր յառաջացած Արհին սրբազան ,
Յնծայր , զի անցած էր ընդ ծով կարմիր ,
Բերկրէր , զի մտնէր Աւետեաց երկիր :

Տէրն առաջնորդ իւր սրբազան ուխտին ,
Տէրն էր , որ ցուցած շաւիղն իր տոհմին .
Գոչէր հոն , « Ով դու , որ ելնես 'ի հող »
« Հրաման երկնային լեր հօտիդ հսկող :

« Սիրէ՛ ըստփեւել այն վշտակիր սիրտ ,
« Չոր մոխրեւ կուզէր ժանտին բազուկ բիրտ .
« Օ՛ն , որ կոչուեցար հայր տանդ խեթահար ,
« Որք կարօտ ցայս վայր ձայնի մխիթար :

« Սրբէ՛ այն արցունքն , որ աչաց վերայ
« Սեւ լուծերու տակ քարոցած մլնայ .
« Սէր՛ , խրախոյս սփռէ այն սրտերուն խոր ,
« Ուր դեռ կը մրափեն առիւծք ահաւոր :

« Հնչէ սուրբ քարոզդ ձանիւ Պաւղոսեան
« Յամէն Հայ ահանջ , յողջոյն Հայաստան .
« Ուր եւ դու լսես , ապրիս յամս յամայր ,
« Արժանի կոչուիլ հօտիդ՝ քաղցրիկ հայր :

« Տեսնելով որ յինքն հսկես 'ի գորով ,
« Չըտաս գայլին մուտք անմեղ դառինքով ,

«Տեանեւով, որ կաս որբոց բարերար,
«Յովսաննայ երգէ քեզ միշտ կեանս պայծառ :

«Բարցէ՛ք այլ սեւուկ քողն այն աթոռէն,
«Որ զէտ աւերակ կանգուն աչաց դէմ,
«Հային յայն աչկունք յարտասուաց կայլակ,
«Ուր կարծես մարած է սուրբ սիրոյն կրակ :

«Զարդարուի ինչպէս ծաղկունք գետեղեր,
«Յոր փալփիլի լուսնակն ու պայծառ աստղեր,
«Զուարթացած յուզի ոգին տխրութեան,
«Ըզքեզ տեսնելու յաթոռն ազգութեան :

«Հոն նստիս որպէս արթուն պահապան,
«Օրինաց Տեառնդ եւ Սահմանադրութեան,
«Փայլի, ո՛վ Պաւղէ, անդ սուրբ գաւազան,
«Զոր տան քեզ Օրէնք ազգիդ սլատուական :

«Զայդ, որ կրես ո՛վ մարդ, ցուսմ' է հովուական,
«Արածող լինել հօտիդ Գրիգորեան,
«Զ'ելնէ՛ բնաւ անկէ բռնութեան հարուած,
«Հարուած, հակառակ երկնային կամաց :

«Հրամանն՝ Օրինաց է միշտ սեպհական
«Հնազանդէ՛ անոր, կաց արդար թարգման .
«Թող դադրի՛ ի ծով մտունջ խոթոռալեաց,
«Որ սահի խաղաղ նաւն չքնաղ մասեաց :

«Պատրաստ ապագայն եւ իւր ճոխութիւն,
«Զոր բաշխէ առատ ազգաց քաջարթուն .
«Հասկ Օն, յառաջ նաւդ, նաւապետ արի,
«Ճանչցիր սլարտքդ, Երկինք միշտ ՚ի քեզ հայի :

«Ե՛ւ շոյտ ընդ առաջ որդւոցդ խնդական
«Դիմել ՚ի տաճար Տեառն Աստուածութեան,

ԷՍ. Գ. 57

Ո՛հ, եւ արդ բացուին
Դրունք Ս. Տաճարին .
Լուսավառ փայլի
Մայր Եկեղեցի ,
Ուր կայ խնդագին
Կաճառն ազգային .
Ուր ձայնք ցնծութեան
Յարձագանս սլանան :

Ուր ճրագունք ցոլուն
Ի կանթեղս շարժուն
Շողշողին յաթոռ ,
Յաթոռ փառաւոր ,
Յոր սուրբ Մերունին
Մատչի խնդագին ,
Տալ խաղաղութիւն
Հօտին սիրասուն :

Տէս, Ուխտն օրինաց
Ուղղի առ Աստուած ,
Ինչպէս հոն խնկին
Ծուխն անուշագին .
« Հնազանդ եմ » , սուրբ ձայն ,
Օրինաց հրաման .
Թնդայ 'ի տաճար ,
Հրճուին սիրտք հազար :

Հոն ժպտի եւ Տէր]
Ի հայն ազգասէր .
Ուր ձայնք օրհնութեան
Մատչին 'ի խորան .
Ե գուճք 'ի գետին ,
Ձեռք բացուած յերկին .

Յօղեն աչք համայն ,
Եւ երգ միաբան ,

Ո՛վ Տէր , ո՛վ է , որ տայ սահման
Քո գթութեանդ Աստուածական .

Որոյ կաթիլն անգամ փոքրիկ
կրնայ ընել ազգ մ'երջանիկ .

Տուր Տէր , ո՛հ , զայն պարգեւ 'ի մեզ
Թշուառ ազգ մ'է զոր խնդրէ , տէս ,

Որ միշտ սիրէ Քեզ ,

Սիրէ՛ ով Տէր մեզ :

Քո սուրբ խնամոց ցօղ փառաւոր
Հոսի 'ի Հայր մեր ալեւոր .

Որով կարէ հսկել 'ի խնամ

Յազգն եւ յաշխարհն մեր Հայաստան .

Ապրի՛ 'ի մեզ Օրէնք , Սէր , Զան


Եւ Պօղոս Հայր մեր Սրբազան .

Ապրի՛ Հայաստան


Կենօք բազմերան :

ՆԵՐՍԷՍ ՍՀՅԳՈՒՆԻ ՄԷԶԳՈՒՐԵԱՆ

Կ . Պօլիս 7 Նոյեմ . 1865







ԿԱՉՄԱՏՈՒՆ Ա. ԲԱԴԴԱՆՈՅՇ

ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCHE

Тчакмәкджилар бөйүк үәни һан 5-6

Завнафнрлар Ծեծ նոր խան Թիւ 5-6

5746
5747
5748
5749
5750
5751

2013



